

միայն հաճոյքը տալ ընթերցողներուն նախնեաց-
մէ մեզի հասած ո՛ր և է պատառիկ տպագրուած
տետնելու, այլ նաեւ քանի մը նոր ու բարեկազմ
բառեր, որոնց եւ առաջին անգամ հոս հանդի-
պեցայ, ինչպիսիք են զրոյցրէկեր, ինքնափակ,
շատալայլիկ, Յետին բառս Պղնձի քաղաքին մէջ
ալ կայ գործածուած և ուրիշներէն՝ բայց շա-
տալուրջ՝ ձեւով միայն, շատալուրջ վաճառա-
կան, իսկ շատալայլիկ (ճանապարհորդ) ձեւով
առաջին անգամ հանդիպեցայ այս գրուածքին
մէջ՝ զոր ուրիշ բառով անկարելի է քննադատել
քան որով որ Ալիշան նկարագրած է հերսէս Ա-
բեղան, աղու և աղուալ:

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

ՅԱՏՍՄ ԱՒՈՒՐ

ՅԵՇԱՍԱԿ Է ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻՆ ԶՈՐ

ԲՈՇԿԵԱՑ ՔՐԻՍՏՈՍ

Այր ոմն անդամալոյծ, աղքատ և ան-
տէր, տկար և անօգնական, անոք և ան-
կարեւոր, լուծեալ և խափանեալ յամե-
նայն պիտանի անդամոցն, — զի աչօքն
կոյր էր, և ձեռօքն թոյլ, ոտօքն սապղար
և մարմնոյն խոցւոր, — և այնպէս անկեալ
կայր ի փողոցի մի՝ ի քաղաքն Երուսա-
ղէմ, վասն ողորմութեան զոր առնէին նմա
մարդիկըն:

Եւ էր ի ժամանակ քրիստոնէութեան:
Եւ իաչելութեանն Քրիստոսի, թաղ-
մանն և յարութեանն և համբարձմանն յեր-
կինս, փառօք առ հայր, ուստի բնաւ ոչ
էր մեկուսացեալ, էջ Քրիստոս մարդասի-
րութեամբ իւրով ի յերկիր, և որպէս մարդ՝
պատճառանօք ինչ իրաց՝ անցանէր ընդ
այն փողոցն, յորում նստէր անդամալոյծն:
Եւ եկեալ եկաց Քրիստոս մերձ անդամա-
լուծին, ետ ողջոյն և ասաց. Ձի՞ նստեալ
ես աստ:

Այն անդամալոյծն. Վասն ողորմութեան
զի կադ եմ և կոյր, սապղար և անտէր:
Այն Քրիստոս. Քանի՞ ժամանակ է որ
աստ անկեալ դնիս:

Այն անդամալոյծն. Լը ամ է՝ որ աստ
վարանեալ նստիմ:

Այն Յիսուս. Ի՞նչ ցաւ ունիս:

Այն անդամալոյծն. Այս եմ՝ զոր տե-

սանես, ամենայն ցաւօք ի լի, և կոճղ ան-
կեալ ի գետնի:

Այն Յիսուս. Ի՞նչ ունիս որ և կարեւոր:

Այն անդամալոյծն. Որ՝ զՔրիստոս ու-
նիմ, և կարեւոր՝ զիմ խոցերս, ծնող՝ զիմ
սովս և զկարօտութիւնս, և կեանք՝ զկու-
րութիւն աչացս:

Այն Յիսուս. Որ համբերէ ի սպառ՝ նա
կեցցէ:

Անդամալոյծն ասէ. Մինչեւ յեր համ-
բերեմ. առաւ նշաւակի արար զիս Քրիս-
տոս ամենայն ազգաց:

Այն Յիսուս. Զոր սիրէ տէր՝ խրատէ:

Անդամալոյծն ասէ. Թէ՛ զիս խրատեց
Քրիստոս, այսոր արժանի եմ: Բայց զքեզ
կամիմ հարցնել թէ՛ դու ո՞վ ես որ զայդ
ամենայն հարցանես ընդ իս:

— Այն Յիսուս. Ես մարդ եմ իբրեւ
զքեզ. հարց զոր և կամիս:

Այն անդամալոյծն. Քահանայ ես թէ
վարդապետ:

Այն Յիսուս. Ոչ քահանայ եմ և ոչ
վարդապետ:

Այն անդամալոյծն. Ապա ի՞նչ մարդ ես.
Հոտդ քահանայի կու գայ, և բառք վար-
դապետի:

Այն Յիսուս. Շատաշըջիկ մարդ եմ ճա-
նապարհորդ:

Այն անդամալոյծն. Այժմ ուստի՞ գաս:

Այն Յիսուս. Ի Հընդկաց աշխարհէն:

Այն անդամալոյծն. Ի դպրոցի կացեալ
ես:

Այն Յիսուս. Սակաւ մի ուսեալ եմ և
ջանամ այլ ուսանել: Զի կամք խիստ ու-
նիմ, և փութամ թէ՛ պէտ լինի և հասանեմ
ճշմարիտ ուսման:

Այն անդամալոյծն. Զե՞ս լսել վասն Ա-
թանազինեայ բժշկին թէ՛ ո՛ր իցէ:

Այն Յիսուս. Ես աշակերտ եմ նմա.
բայց արուեստ մի աւելի գիտեմ քան
զնա:

Այն անդամալոյծն. Մանուկ ես, և ըստ
մանկութեան խօսիս: Զիմարդ կարէ աշա-
կերտ առաւել գիտել քան զվարդապետ:

Այն Յիսուս. Լաւն և մեծն ի գործոյն
ճանաչի:

Ասէ անդամաւոյն. Արա ինձ ողորմու-
թիւն ի գաւառեանն Քրիստոսի:

Ասէ Յիսուս. Դու զՔրիստոս ուստի՞
ճանաչես:

Ասէ անդամաւոյն. Ի համբաւոյ լսեալ
եմ զմանէ. զի առաքեալք նորա քարո-
զեցին ընդ ամենայն երկիր զգործութիւն
սքանչեւեաց նորա՝ զոր աւետարանն պատ-
մէ:

Ասէ Յիսուս. Երբ հանց ծանօթ ես Քրիս-
տոսի, և աւետարանի նորա, և առաքելոցն,
ապա ընդէ՞ր ոչ բժշկեցին զքեզ:

Ասէ անդամաւոյն. Ես չունէի զոք՝ որ
զիս առ ոտս առաքելոցն տանէին, որ
բժշկէին զիս:

Ասէ Յիսուս. Զի՞նչ տուս ինձ որ ես
բժշկեմ զքեզ:

Ասէ անդամաւոյն. Այլ ով ոք բժշկէ
զիս, բայց միայն թէ աջն Քրիստոսի:

Ասէ Յիսուս. Երբ դու այնչափ յուսա-
ցեալ ես ի Քրիստոս, ընդէ՞ր ոչ բժշկեաց
զքեզ: Մի թէ անհաւատ ես և չարաշնոր-
հեղուցեալ:

Յայնժամ բարկացաւ անդամաւոյն և
ասաց. Որով մեղանչեմ ես. զի մեղաց
գործիս ոչ ունիմ: Աչերս կոյր է, և ձեռքս
թոյլ, ոտքս տկար, և խոցովս ապակա-
նեալ: Իմ բան ու գործն այն է, որ զցայգ
և զցերեկ զՔրիստոս աղաչեմ, վասն չի-
նութեան աշխարհիս, և մանաւանդ վասն
ողորմածաց իմոց և վասն ցաւոց անձին
իմոյ:

Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր այդպէս չար-
չարիս, եթէ չես մեղաւոր: Զի Քրիստոս
զարդարն սիրէ և զմեղաւորն առէ:

Ասէ անդամաւոյն. Միթէ՞ դու յաշա-
կերտաց անտի նորա իցես:

Ասէ Յիսուս. Ես ոչ յաշակերտաց նորա
եմ և ոչ զքարոզութիւն նորա լուեալ եմ:

Ասէ անդամաւոյն. Ապա դու չես լուեալ
զաշխարհակեցոյց մարդասիրութիւնն նո-
րա, որ էջ ի յերկնից, և մարմնացաւ ի
սուրբ կուսէն Մարիամայ, ծնաւ ի յայրին,
ընծայեցաւ ի մոգուցն, պատեցաւ ի հո-
վուսն, և երկրպագեցաւ ի հրեշտակացն,
փառաւորեցաւ ի թագաւորացն և սպասա-

ւորեցաւ ի յերկնաւորացն, քառասնօրեայ
ի տաճարն եկաւ, և զինքնափակ դուռն
տաճարին երաց, ի ծերոյն զգուցեալ և
աստուած դաւանեցաւ, զծերն ի կապանաց
մարմնոյն արձակեաց, և ի մահուանէ ի
կեանս փոխեաց, փախեալ ի յեղիպտոս
և զկուռն կործանեաց, մկրտեցաւ ի Յոր-
դանն ի Յովհաննէ, վկայեցաւ ի հայրա-
կան ձայնէն և յաղանակերպ իջմանէ Հոգ-
ւոյն սրբոյ, պահեաց ծովով զաւուրս քա-
ռասուն, և յաղթեաց փորձողին յերիս
տեսակս մարտին, գնաց ի Նազարէթ, և
սկսաւ առնել սքանչելիս. ի վերայ օդոյն
գնաց, և կոխեաց զայլիս ծովուն, զՂուրն
ի զինի փոխարկեաց, և զդեան հալա-
ծեաց, զկոյրսն լուսաւորեաց, և զկաղսն
գնացոյց, զբորոտսն սրբեաց, և զմեռեալսն
յարոյց, զհացն բազմացոյց, զմեղաւորսն
արդարացոյց, իսաչեցաւ, թաղեցաւ, և յա-
րեաւ ի մեռելոց, համարձաւ փառօք յեր-
կինս և նստաւ ընդ ալմէ հօր ի բարձունս,
և զալոց է ի դատել զկենդանիս և զմե-
ռեալս և հատուցանել ըստ իրաքանչիւր
գործոց:

Ասէ Յիսուս. Դու զայդ ամենայն ուստի՞
ուսար:

Ասէ անդամաւոյն. Ուսեալ եմ ի քա-
րօղողաց և լուեալ ի վարդապետաց:

Ասէ Յիսուս. Երբ դու հէնց ճարտար ես
լեզուովդ, զքեզ ընդէ՞ր ոչ առաքեաց Քրիս-
տոս ի քարոզութիւն աւետարանին իւրոյ:
Ասէ անդամաւոյն. Ինձ զցաւս մարմնոյս
և զկուրծիս և չաացս վիճակեաց:

Ասէ Յիսուս. Դու զայդ արժանի ես:
Յայնժամ բարկացաւ անդամաւոյն և
ասաց. Ես իրաւի այսոր արժան եմ: Այլ
դու ոչ մնաս առանց պատուհասի:

Ասէ Յիսուս. Այդ լեզուովդ ես՝ որ այդ
չարեացդ ես դիպել:

Ասէ անդամաւոյն. Ես զիմս առեալ եմ
ըստ արժանեաց իմոց սաստիկ պատուհաս:

Ասէ Յիսուս. Դու ի սուտ ասելն՝ սո-
վորեի ես. և լեզուդ ճարպիկ է, և երեսդ՝
անամօթ: Ասես թէ յարութիւն առնէ Քրիս-
տոս և անմահութիւն պարգեւէ: Յարու-
թիւն մարդոյն՝ կինն է, և անմահութիւն՝

որդին, քեզ ոչ կին կայ և ոչ որդի։ Եւ արքայութիւն այն է որ ուտէ և ըմպէ և զմարմնոյն կարինն կատարէ։

Ասէ անդամաւոյծն. Եղուկ թէ ճարպիկ մարդ ես դու, և հերձուածող քան զԱրիոս։ Ի բաց գնա յինչն զի Աստուած դատելոց է զքեզ ընդ սատանայի։

Ասէ Յիսուս. Ես գիտեմ և Աստուած, այդ չէ քեզ հոգս։ Բայց թէ կամիս ողջանալ, տուր ինձ զոր ինչ ունիսդ և ես բժշկեմ զքեզ։

Ասէ անդամաւոյծն. Զինչ կամիս առնուլ յինչն և տալ ինձ առողջութիւն։

Ասէ Յիսուս. Կիտեմ որ շատ ոսկի դեկան ծրարեալ ունիս ի քուրձդ քո. զայդ ի յիս տուր որ բժշկեմ զքեզ ի չարաչար ցաւոցդ քոց։

Ասէ անդամաւոյծն. Քեզ հանց կեանք՝ զինչ ինձ ոսկի դեկան կայ։

Ասէ Յիսուս. Թէ ոսկի չունիս դու՝ արծաթ տուր։

Ասէ անդամաւոյծն. Ոչ արծաթ ունիմ։

Ասէ Յիսուս. Ունիս, բայց ազան ես, և տալ ոչ կամիս։

Ասէ անդամաւոյծն. Ասացի թէ հանց կեանք եւ աւուրք՝ զինչ ես արծաթ և ոսկի ունիմ։

Ասէ Յիսուս. Ապա ի՞նչ ունիս, ասա՛ ինձ։

Ասէ անդամաւոյծն. Փրիստոս վկայ է՝ որ չորս փող ունիմ, և կտոր մի հաց, և երկու լումայս։ Ա՛ռ ահա զայն ի քեզ և բժշկեա՛մ զիս։

Ասէ Յիսուս. Երբոր տանն աւել ածեն, նա երկու և երեք լումայս և այլ աւելի հետ աւելին երթայ, և զկտոր հացն՝ շանն ձգեն։

Ասէ անդամաւոյծն. Երկու լումայն զբրաստի մի վարձ է. և զկտորն մուքերիկին ուտէ։

Ասէ Յիսուս. Դու ասացեր թէ եօթն ցաւ ունիմ. այդչափ վարձովդ՝ զոր դու տաս, ո՞վ բառնայ զայդ ամենայն ցաւդ ի քէն։

Ասէ անդամաւոյծն. Սաստիկ ազան և ընչասէր մարդ ես. միթէ Յուդայի ազգականն ես դու։

Ասէ Յիսուս. Ոչ գիտես որ ամէն մարդ՝ Աղամայ որդի է. և ամէն մարդիկս մէկ ազգ ենք։ Բայց իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց առնու զհասուցումն։

Ասէ անդամաւոյծն. Ապա թէ ըստ գործոցն է հասուցումն ոչ երկնչիմ ես։

Ասէ Յիսուս. Այդ իսեղբդ ես, վասն որոյ այդ ցաւոցդ ես դիպեալ և հանդիպել։

Ասէ անդամաւոյծն. Թէպէտ մարմնովս նշաւակեմ, սակայն հոգովս հրաւիրեալ եմ ի գոգն Աբրահամու։

Ասէ Յիսուս. Ես աստ բարի կացեալ, և անդ կալոց եմ ի վեր քան զգոգն Աբրահամու։ Եւ դու վասն չարեաց քոց աստ տանջիս և անդ տանջելոց ես։

Ասէ անդամաւոյծն. Դու զքեզ մեծ սիրելի գիտես Աստուծոյ. այլ զիսաւարն աղջամդջին և զհուրն զեհնինն պատրաստեալ է քեզ Փրիստոս։

Ասէ Յիսուս. Ես զայն ոչ պաշտեմ որ զիս ի խաւարն և ի հուր զեհնինն արկանէ։

Յայնժամ բարկացաւ անդամաւոյծն և ասաց. ի զատ երթ, և ի բաց գնա՛. գնա՛ յինչն և ի չիք դարձիր. ահա ուրացար զՓրիստոս. ի բաց երթ և գնա՛ յինչն, այլդ ոտնկոտոր. ի բաց գնա յաղքատէս, այսօր հաներ զիս ի մուրոյ։ Զայդ ճոռոմ լեզուդ՝ որ դու ունիս, ի դիւանի թագաւորաց Խօսիս, և աշխարհի աւեր ածես։ Երթ գնա ի բաց ի տառապելոյս, և գտա՛նես քեզ զըրդընկեր ի հրապարակի քաղաքիս։

Ասէ Յիսուս. Հանց կու պարծիս դու ի Փրիստոս՝ որ Թլուի թէ Փրիստոսի հօրեղբոր որդի ես, և կամ մեծ երախտաւոր Փրիստոսի։ Դու ինչ՝ որ քո երախտիքն ինչ լինի մօտ ի Փրիստոս։

Ասէ անդամաւոյծն. Ես ի Փրիստոս աստուածն հաւատացեալն եմ և ունիմ առ նա յոյս՝ գտանել ի նմանէ ողորմութեան։ Եւ թէ ես մեղաւոր եմ, նա քաւիչ մեղաւորաց է. և թէ կորուսեալ եմ, նա գտիչ կորուսելոց է։ Թէպէտ և ես անարգ եմ, այլ նա անարգամեծար է։ Թէպէտեւ ես ապականեալ եմ, նա նորոգող է։ Թէպէտ

և ես մեռեալ եմ, նա կենսատու է: Բայց քեզ՝ որ ուրացողդ ես, կայ և մնայ հուր գեհնին, և խաւարն արտաքին. լալ աչաց և կրճել առամանցն, ի տարտարոսն ներքինն և ի սառնամանիքն անդրնդային:

Այն է Յիսուս. իս ուրացող չեմ, այլ զճշմարիտն ասեմ: Բայց դու տգէտ ես և անիմայ. թէ ի քեզ իմաստութիւն կայր կամ թէ գիտութիւն ունէիր, մինչեւ ի յայս դու բժշկած էիր: Ապա ոչ ի քեզ հաւատ կայր, և ոչ յառաքեալն զօրութիւն բժշկութեան:

Այն անդամալոյծն. Առաքեալն զօրութեամբ և անուամբն Քրիստոսի առնէին զքանչելիան, որպէս և ցուցանէ աւետարանն Քրիստոսի և պատմութիւն սուրբ առաքելոցն Քրիստոսի:

Այն է Յիսուս. Առաքեալն պարապ և անբան մարդիկ էին. Թուղթն շատ՝ և թաւնաքն յուղ՝ զոր ինչ և կամեցան, զայն գրեցին:

Իւ բարկացաւ անդամալոյծն և ասաց. Զիմոր լուսացաւ ի վերայ մեր օրս այս, որ տեսի զանհաւատ զայրս զայս հոյհոյիչ: Ի բաց գնա յինն, մի թէ ամենակարող պաշն Քրիստոսի զքեզ իրբեւ զիս առնէ: Ես հաւատացեալ եմ և հաւատաւ ի Քրիստոս Աստուած, որ մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ: Նա որ բժշկեաց զվէրս Աղամայ չարչարանօք խաչին իւրոյ, նա ողջացնէ զիս: Նա որ զլազարոս չորեքօրեայ մեռեալն յարոյց, նոյն ինքն և յիս զթայ և տայ ինձ առողջութիւն:

Յայնժամ զթացաւ ի նա Յիսուս, և քաղցր բարբառով ասաց նմա. Արի ա՛ռ զմահինս քո և գնա՛:

Իւ նոյն ժամայն յարեաւ այրն ողջ անդամօք, երազաքայլ ոտիւք, յաղողական ձեռօք, պնդակազմ բազկօք, լուսապայծառ աչօք: Երթայր հաստատուն՝ և փառաւոր առնէր զԱստուած և այլ ոչ եւ տես զՅիսուս:

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԵԱՆՑ

ՎՐԱՑ

Ֆիմրի « Հայոց մատենագրութիւն » . — Բիւտմէր « Թուղթ երկմատար » . — Զօլաւմիամ « Երգ Պլուզ վարդապետի » . — Փալմիէրի « Վրաց դարձը » . — Բժպ. Յ. Թոփչեամ « Յակոբ Մեծբարցի » :

Ուսուցչապետն Ֆրանց Նիկողայոս Ֆիմրէր հրատարակած է տետրակ մը՝ « Die armenische Literatur » վերնագրով. մասն կը կազմէ արեւելեան գրականութեանց նուիրեալ շարքի մը՝ Համառօտ պատկերացումն է ամբողջ հայ գրականութեան, սկիզբէն մինչեւ այսօր: Այսպիսի բաղադրական գործի մը մէջ, անձուկ ծրագրով, օտարներու համար սահմանուած, Հայ մը անշուշտ պակասներ պիտի գտնէ, բայց միանգամայն դիտողութիւններ՝ օտարի տեսակէտէ, հետեւաբար նոր գնահատումներ:

Պ. Ֆիմրէ կը համարի՝ թէ Հայերը Եւրոպայէն Ասիա գաղթած ըլլան, աւելի քաղաքակրթուած աշխարհ մը փնտռելով: Հայերէնը՝ իրանեանի մէկ ճիւղը չընդունիր. անոր անկախութիւնը կը դաւանի:

Հետաքրքրական են տեսութիւնները՝ Հայոց նոր մատենագիրներու մասին:

Աւելի ազգային նկարագիր կը գտնէ Արովեանի, Պոռեանցի, Աղայեանի քով, քան Ռաֆֆիի, Իրենցիի, զորս Վալթէր Սթոյի աշակերտները կը համարի: Նազաբեան, Նալբանդեան, Պատկանեան կրած են արեւմտեան ազդեցութիւնը, բայց ոչ ճահ-ազգիի չափ, որ Լորտ Պայրընի հայացումն է:

Արդի բանաստեղծներէն գնահատման արժանի կը գտնէ Յովհաննիսեան, Թու-

